

«ՊԱՏԵՐԱԶՄՈՂ

ԺՈՂՈՎՐԻԻ

ԱԶԳԵՐՈՎ»

Յունիսը քաղաքական կարևոր անցու-
ղարձներով հարուստ ամիս մը եղաւ Հա-
յաստանի ժամանակագրութեան մէջ.
Շուշիի ու Լաչինի յաջողութիւնը
գրեթէ անմիջապէս «հաստատարակչուե-
ցաւ» Շահումեանի ղեկավար ըմբռնելի
անկումով, որմէ ետք միջոցառումներ
լարուեցաւ Մեղրիի շրջանին սպառնացող
վտանգով: Այս վերջինները, յայտնա-
պէս, մղեցին իշխանութիւնը լուրջ միջո-
ցառումներու, որոնք սակայն իրենց կար-
գին ա՛լ աւելի լրջացուցին իրավիճակը:

Նման պայմաններու մէջ բնական է որ
մարդ նախ մտածէ, մտահոգուի երկրին
սպառնալուծեան վիճակով, մտածէ հար-
կաւոր միջոցառումներու մասին. այդպէս
եղած պէտք է ըլլայ Հայաստանի Պաշտ-
պանութեան նախարարութեան եւս պա-
րագան որ Յունիս 22-ին յայտարարու-
թեամբ մը հանդէս եկած է Գերագոյն
Խորհուրդին մէջ: Այդ յայտարարու-
թեան կ'արձագանգէ «Հայաստանի Հան-
րապետութեան» Յունիս 23-ի թիւը ուր
կայ նաեւ հարցադրոյց մը, Պաշտպանու-
թեան նախարար Վազգէն Սարգսեանի
հետ: Կարելի է յայտարարութիւնը եւ նա-
խարարին արտայայտութիւնը իրարու
լրացուցիչ նկատել, թէ եւ լրացումները
աւելի տուեալ մը չունին միշտ համոզիչ
ալ ըլլալու:

Պաշտպանութեան նախարարութիւնը
նախ կը խօսի այն խուճապին մասին որ
ծաղած է «ուզմաբաղաբակի իրավիճակ-
ի կտրուկ սրման հետեւանումով»: Այդ
խուճապը անտեղի կը դռնէ, յաջորդ պար-
բերութեան մէջ վստահեցնելով որ ինք
(Պաշտպանութեան նախարարութիւնը)
ամէն բան կ'ընէ ղեկավարին իրավիճակէն
պատուով դուրս դալու համար եւ կու-
գայ: Յայտարարութիւնը, ընդհակառակն,
վտանգին մեծագոյնը կը նկատէ ներսի
ճակատին վրայ, «եթէ հակառակորդին
քողած, ինքներս մեր մէջ թշնամիներ
փնտռենք, ազգային անյաջողութիւնները
ձառայեցնենք ինչ -- ինչ կուսակցական
եւ խմբակցական շահերի»: Այս վտանգը
յաջորդ տողերուն մէջ աւելի մուսյլ դու-
նաւորումով գրեթէ շօշափելի ներկայու-
թիւն կը դառնայ, երբ յայտարարութիւ-
նը կ'ըսէ թէ դասալքումը կ'աւելնայ եւ կը
տկարանայ ռազմական կարգապահու-
թիւնը: Գանդատ կը յայտնուի նաեւ կու-
սակցական մամուլէն որ «շարքեր ա-
ռաջ տարածում է սպասուելիք գործու-
ղութիւնների մտաւոր ծրագիրն ու նը-
պատակը: Կուսակցականացում եւ կամա-
ւորական ջնկատները»: Մտաւորութիւն-
ները իրենց ծայրագոյն կէտին կը հասնին
յայտարարութեան առաջին մասին վեր-
ջին նախադասութեամբ որ կ'ըսէ. «վաղը
հանրապետութիւնը կարող է կանգնել քա-
ղաքացիական պատերազմի վտանգի ա-
ռաջ»:

Մեկնելով այս կացութենէն, նախարա-
րութիւնը կ'առաջարկէ Ազրբեջանի հետ
սահմանամերձ շրջաններու մէջ ռազմա-
կան վիճակ հոչակել, պատերազմական
գործողութեան ընթացքին ժամանակաւոր
կերպով ղաղրեցնել կուսակցութիւններու
գործունէութիւնը, քրէական պատաս-
խանատուութեան հարց ներկայացնել այն
անձերուն դէմ որոնք ռազմական ապօրի-
նի միաւորներ կը ստեղծեն կամ կը փոր-
ձեն ստեղծել, լրասփիւռները ենթարկել
ռազմական զբառնութեան, զինուորա-
կան տարիքի մարդոց երկրէն ելքը ար-
գիլել, ինչպէս նաեւ ազատ ուղեւորու-
թիւնները դէպի Ղարաբաղ, Գորիս, Մեղ-
րի, Սիսիան, Արարատ, Նոյեմբերեան
եւայլն ու այս շրջաններուն մէջ ստեղծել
ռազմական խորհուրդներ:

Այս առաջարկներուն մէջ նախ կան
ընդհանուր կացութեան մասին ըսուած --
ներուն հակասող կէտեր որոնք կարգ մը
հարցումներու ծնունդ կուտան. եթէ նոյն-
իսկ բնակչութեան խուճապը անտեղի կը
նկատուի, ինչո՞ւ կ'առաջարկուի ռազ-
մական վիճակ հոչակել ու մանաւանդ

կուսակցութիւններու գործունէութիւնը
առժամապէս ղաղրեցնել. նման քայլ մը
ժողովրդավարութեան արուած ծանր հար-
ուած մը պիտի չնկատուի՞ միջազգային
հանրային կարծիքին կողմէ, որուն հրամ-
ցրնելիք մեր գլխաւոր զբաղաբալուն էր
ան մինչեւ այսօր: Նոյնը չէ՞ պարագան
ռազմական զբառնութեան ու ցոյցերը
արգիլելու պահանջներուն: Գալով այն
կէտին որ քրէական յանցարորի հետա-
պրնդում կ'ուզէ ապօրինի ռազմական
միաւորներ ստեղծողներու դէմ, կրկին
պատրաստ բան մը կը մատնէ. նման պատ-
րաստութիւն յեղատեղեւորական չի կրնար
ըլլալ. եթէ գոյութիւն ունին անոնք
այսօր, ինչո՞ւ պատժական միջոցառու-
մը կամ օրէնքի կիրարկումը այսքան ու-
շացան:

Հարցադրոյցի բաժինը կարգաւորով ալ
կարելի չէ պատասխան դռնել այս կամ
նման հարցումներու. հոն նախ Վ. Սար-
գսեան արդարօրէն կը պանդատի քաղա-
քական պատահողներով ծանրացած վի-
ճակէն որ կը տկարացնէ պաշտպանու-
թեան ամրապնդումը. կը դանդատի կու-
սակցականացումի ապառոջ երեւոյթէն
որ նոյնիսկ «մահացած ռազմիկին որպէս
որեւէ կուսակցութեան անդամ կը բացա-
յայտէ»: Գանդատը ապա կը վերածուի
ամբաստանութեան, ուղղած՝ յատկապէս
Հ. Յ. Դ. -ի որ «Սփիւռում Հայաստանի
եւ Արցախի պաշտպանութեան համար
հանգանակել է մի բաւական պատկառելի
գումար՝ աւելի քան կէս միլիոն տոլար,
որից Պաշտպանութեան նախարարութիւնը
ոչ մի կոպէկ չի ստացել»: ապա նախա-
րարը հարց կուտայ. «ո՞ւր են գնացել այդ
գումարները»: Սփիւռքի մէջ, Արցախի
կամ Հայաստանի համար դումարներ հա-
ւաքուեցան երկրաշարժէն ի վեր. այսօր
երբ քաղաքական իրավիճակը կը նեղէ
իշխանութիւնը, Խորհրդարանին մէջ
փոքրամասնութեան վերածուած վիճակով
մը, ո՞ւր կէ հաշիւ պահանջելու սա տրա-
մադրութիւնը: Արցախի պատրուակով
կատարուած նուիրահաւաքին ձեռնար-
կողները ոչ մէկ յանձնառութիւն յայտնած
էին թէ Հայաստանի Պաշտպանութեան
նախարարութեան հակակշիւն պիտի են-
թարկուէր դումարը...:

Չարմանալի ուրիշ կէտ մը Վ. Սարգսեա-
նի պատասխաններուն մէջ կը վերաբերի
հանրահաւաքները, ցոյցերը արգիլելու
մտադրութեան. այլ խօսքով՝ ժողովրդա-
վարութեան սպառնացող երկրորդ վտան-
գի մը. «այդ հանրահաւաքներն ու երթե-
րը կարող են տանել գորամաւերի, անգամ
Հայաստանի Պաշտպանութեան ստորաբա-
ժանումների վրայ յարձակումներին» կ'ըսէ
Վ. Սարգսեան, քիչ ետք աւելցնելով. --
«ի վերջոյ, մենք էլ կարող ենք հանրա-
հաւաք կազմակերպել, որին համոզուած
եմ, որ ժողովուրդը կը գայ: Նրանց մենք
բացայայտ ու պարզ կ'անենք որ ճշմար-
տութիւնը»: Երկու ճակատներու յստակ
մատնանշումը նախարարի մը կողմէ զար-
մանալի է կրկին. մանաւանդ ցոյցերու,
հանրահաւաքներու մասին սա երկակի
կեցուածքը. նախարարը նախ դանտնք ար-
գիլելու հարկին մասին կը խօսի, ապա
կ'ըսէ թէ իրենք ի պահանջեալ հարկին
կրնան այդ միջոցին դիմել: Յետոյ տա-
րօրինակ չէ՞ այդ միջոցառումին դիմել
այլեւս իշխանութեան գլուխ անցած զե-
կավարներու համար:

Վ. Սարգսեանի ըսածներուն մէջ ամէնէն
յուսադրողը այն է թէ երկրին «սահմա-
նամերձ շրջանները յուսալիօրէն պաշտ-
պանուած են եւ ոչ մի անակնկալ չի կա-
րող լինել»: Այսուհանդերձ, կը թելադրէ
ամէն բանի նայիլ «պատերազմող ժողո-
վրդի աչքերով», յատկապէս խուսափե-
լով խուճապէն: Թելադրանք որ միակ
կարելին էր ներկայի պայմաններուն մէջ
եւ որ աւելի ամուր պիտի հնչէր եթէ չըլ-
լային մնացեալ հակասութիւնները:

ԱՐՓԻ ԹՈՒՈՅԵԱՆ